ԳԼՈՒԽ ԾԴ.

Գործք տեղակալաց. Պարտք աթոռոյն Երուսաղէմի և Թշուառութիւն նորա։ Յովհաննէս վարդապետ Բաղիշեցի եւ երաշխաւորութիւն նորա։ Պալքէսիրցի Յովհաննէս։ Ընտրութիւն Գրիգոր վարդապետի և բաժանումն Պատրիարքութեան Երուսաղէմի։

ԱՐԴ՝ յետ միաւորելոյ զպատրիարքութիւնն Երուսաղէմի ընդ պատրիարքութեան Կոստանդինուպօլսոյ, Պապա վէքիլ Նազր Ղազիմալ անուամբ եկեալ տեղակալէին աստ յԵրուսաղէմ, և գործէին զանասելի չարիս, որպէս երկար գրէ ցաւագին բանիւք Հաննա վարդապետ ակառնատես։

Եւ 'ի լինիլ այսմ այսպէս՝ զտուրս ողորմութեան ուխտաւորաց, որք կամէին գնալ յԵրուսաղէմ, առնուին անդ 'ի Կոստանդինուպօլիս, եւ տային թուղթ 'ի ձեռս նոցա, թէ վճարեաց աստ զպարտաւորութիւն իւր։ Եւ զի գնէին ոմանք իբրեւ զՄուխթայ զտեղակալութիւնն զայն, և 'ի հասանիլ ուխտաւորաց յԵրուսաղէմ՝ Գործակալք տեղւոյն որոց չէր եւս էր լրացեալ պայմանեալ ժամանակն, բռնութեամբ առնուին 'ի նոցանէ՝ զոր ինչ և կամէին. ամին իրի ոկսաւ նուազիլ թիւ ուխտաւորաց ամ յամէ։ Եւ երբեմն առաքէին զփոխանակագիրս՝ զի Տեղակալք վճարեսցեն զայն յայլուստ եկեալ ուխտաւորաց. եւ երբեմն յղէին անդ զաղգականս և զծանօթս իւրեանց՝ որդւովք և ընտանեօք, որք բաղումք 'ի նոցանէ այն ինչ զերծեալք 'ի բանտից և 'ի կապանաց. և երբեմն եւս զքահանայս ոմանս վարակեալս տգիտութեամբ՝ վարել զպաշտօն Պատրիարքի, և իրաքանչիւր ամի տային բերել զկոնդակս յԵրուսաղէմէ լցեալս ամենապատիկ ստութեամբ, եւ ընթեռնուին յեկեղեցիս հանդերձ ծանուցմամբ յատենի, թէ 'ի ձեռն Տեղակալաց մերոց զայս քան բարիս արարաք տանն Ս. Յակոբայ. իսկ ընդ հակառակն՝ 'ի հասանիլ նոցա յԵրուսաղէմ, բռնացեալ 'ի վերայ միաբանաց տառապէին զնոսա, և խոնարհեցուցանէին 'ի կամս իւրեանց. իշխէին տիրաբար 'ի վերայ եկեղեցական դասուց, սկսեալ յԵպիսկոպոսէ՝ մինչեւ ցաղքատ